# Թեստ կերպարվեստից և կիրառական արվեստից

## Հրահանգ

Ձեր առջև քննական թեստի էլեկտրոնային բուկլետն է:

Գործնական աշխատանքը կատարեք գործնական աշխատանքի համար հատկացված թերթիկի վրա: Գործնական աշխատանքը (առաջադրանք 26) կատարելու համար Ձեզ բաժանել են մատիտ, ռետին և սրիչ:

Գործնական առաջադրանքի համար հատկացված թերթիկի վրա աշխատեք մատիտով: Մատիտ թույլատրվում է գործածել միայն այս առաջադրանքը կատարելու համար:

**Թեստի առավելագույն միավորն է՝ 60:**

**Թեստի վրա աշխատելու համար տրվում է 4 ժամ:**

**Մաղթում ենք հաջողություն :**

**№ 1-19 առաջադրանքների հրահանգ.** (Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 1 միավոր) Յուրաքանչյուր հարցին տրված է չորս ենթադրական պատասխան: Դրանցից միայն մեկն է ճիշտ: Ընտրված պատասխանը տեղափոխեք պատասխանների թերթիկի վրա հետևյալ կերպ՝ պատասխանների համապատասխան վանդակում դրեք X նշանը: Ոչ մի ուրիշ նշում՝ հորիզոնական կամ ուղղահայաց գծեր, շրջագծում և այլն, համակարգչային ծրագիրը չի ընկալում: Եթե ցանկանում եք պատասխանների թերթիկի վրա ուղղել պատասխանն, ամբողջությամբ ներկեք վանդակը, որտեղ դրել եք X նշանը, որից հետո միայն նշեք պատասխանի նոր տարբերակը (դրեք X նշանը նոր վանդակում): Հնարավոր չէ երկրորդ անգամ ընտրել այն պատասխանը, որն ուղղել եք:

(1) **1. Ո՞ր մշակույթի ճարտարապետության նմուշն է պատկերված նկարում:**

ա) Մեզոամերիկյան,

բ) Հեռավոր Արևելյան,

գ) Միջագետքի,

դ) Հին Եգիպտական:

(1) **2. Ո՞րն է սկզբնական գեղարվեստական տեխնիկան, որի նմուշները ստեղծվել են բոլոր մշակույթներում, մարդկության զարգացման ողջ պատմության ընթացքում և մինչ օրս ակտիվորեն օգտագործվում են:**

ա) Որմնանկար,

բ) քանդակ,

գ) գրաֆիտի,

դ) ստենսիլ:

(1) **3. Հաշվի առնելով ոճի առանձնահատկությունները և թեմատիկան՝ որոշեք, թե արվեստի որ ուղղությանն է պատկանում ներկայացված գեղանկարը:**



ա) Ռոկոկոյին,

բ) Նեոկլասիցիզմին,

գ) Ռեալիզմին,

դ) Վերածննդին:

(1) **4. Թվարկածներից ո՞ր շինությունն է ներկայացված լուսանկարում վերևի տեսարանից:**

ա) Աթենիի Սիոնը,

բ) Գավազին,

գ) Նինոծմինդան,

դ) Մցխեթայի Ջվարին:

(1) **5. Ո՞ր գեղարվեստական առանձնահատկություններն են բնորոշ Պարթենոնին:**

ա) Հոնիական օրդերի կատարելություն, թեթև կորություն և բարձրաքանդակներով զարդարված ֆրիզ,

բ) Դորիական օրդերի կազմակերպվածություն, կուրվատուրա (թեքություն) և բարձրաքանդակներով զարդարված մետոպներ,

գ) Դորիական և հոնիական օրդերների սինթեզ և բարձրաքանդակներով զարդարված ճակտոններ,

դ) Դորիական սյուներ, զարդարված հոնիական խոյակներով և արհեստականորեն ստեղծված սուբստրուկտուրա:

(1) **6. Հին Եգիպտոսի պահպանողական մշակույթի ո՞ր շրջանն է բնութագրվում ընտանեկան տեսարանների, անհատական արտաքին նշանների, երկարավուն գլուխների և մատների պատկերմամբ:**

ա) Ամառնական,

բ) Մինչդինաստիական,

գ) Միջին Թագավորության,

դ) Պտղոմեական:

(1) **7. Ի՞նչն է վստահեցնում, որ ներկայացված նմուշը պատկերված է խորանի աբսիդի կոնքում:**

ա) Ռեգիստրների բաժանված պատի վրա խիստ ճակատային պատկերների կիրառումը և դրանց չափազանցմամբ արտահայտչականության ուժեղացումը,

բ) պատի կիսաշրջանաձև մակերևույթին ֆիգուրների պատկերման էֆեկտը՝ ասես առաջ լինեն թեքված, ինչը մեծացնում է դրանց կարևորությունը,

գ) մեկ հարթության վրա պատկերված, ընդհանրացված ձևերով ստեղծված, խիստ ֆիգուրների տարբերվող չափերը, որոնք սահմանում են մոնումենտալությունը,

դ) պատի վերին հատվածում պատկերված կերպարների առանձնահատուկ մանրամասնումը, ինչն ուժեղացնում է ընկալման իրականությունը և էքսպրեսիան (արտահայտչականություն):

(1) **8. Ո՞ր դրույթն է արտահայտում Ղինծվիսիի տաճարում Թամար թագուհու որմնանկարը հյուսիսային պատի ստորին ռեգիստրում՝ արևելյան կողմում տեղադրելու իրական հիմքը, ինչը Վրաստանում, ընդհանուր առմամբ, համարվում է պատմական դեմքերի պատկերման համար նախատեսված տեղը:**

ա) Պատմական դեմքերի պատկերները շատ ավելի խոշոր չափերի են, քան սրբերի պատկերները, և համաձայն տեկտոնիկային ենթակա պատկերագրական սխեմայի՝ կարևոր պատկերների համար ամենալայն հատվածը հենց այս պատի վրա է,

բ) Վրաստանում պահպանվել է պատմական դեմքերի դիմանկարները տաճարի ներսում՝ հարավային, այսինքն գլխավոր մուտքի դիմացի հատվածում, սրբերին հավասար պատկերելու ավանդույթը՝ կարևորագույն մարդկանց դիմանկարները տաճար մտնելուն պես անմիջապես ընկալվելու տեսանկյունից,

գ) 12-րդ դարից Վրաստանում որմնանկարչությունը կորցնում է իր տեկտոնական բնույթը և շախմատաձև բաշխվում պատերի վրա, ինչը ձևավորում է դինամիկ, դեկորատիվ ոճ, և պատմական դեմքերի դիմանկարները ևս ենթարկվում են այս նոր համակարգին,

դ) Մոնումենտալ գեղանկարչությունն ուներ ճանաչողական նշանակություն, այն հանրությանը տեղեկատվություն տրամադրելու ակներև միջոցն էր: Այս առումով պատմական դեմքերի պատկերները ձեռք էին բերում կարևոր նշանակություն, ինչը դարձավ դրանք նշանակալի տեղերում տեղադրելու հիմքը:

(1) **9. Ներկայացված նմուշներից որի՞ հեղինակն է Դմիտրի Շևարդնաձեն:**

| ա) | բ) | գ) | դ) |
|---|---|---|---|
| |  | |  |

(1) **10. Ո՞ր առանձնահատկությունը *չի վերաբերում* ֆովիզմին:**

ա) Ինտենսիվ, հակադիր գույների կիրառում առանց տոնային աստիճանավորման (գրադացիա),

բ) պարզեցված ձևեր, շրջագծված ընդհանուր ուրվագծով,

գ) պատկերի կառուցումը ուղղանկյունաձև վրձնահարվածների միջոցով,

դ) կոմպոզիցիաների կառուցման մերժումը լույս-ստվերի և հեռանկարի միջոցով:

(1) **11. Ո՞ր ձևակերպումն է արտացոլում տարբերությունը աբստրակտ էքսպրեսիոնիզմի և մինիմալիզմի միջև:**

ա) Աբստրակտ էքսպրեսիոնիզմը դիտողի մոտ առանձնահատուկ վերաբերմունք է առաջացնում պատկերված առարկայի նկատմամբ, մինչդեռ մինիմալիզմն արտացոլում է այն, թե ինչ է զգում նկարիչը,

բ) աբստրակտ էքսպրեսիոնիզմը պատկերը ներկայացնում է միայն մեկ հարթության վրա, մինչդեռ մինիմալիզմը ստեղծում է մանրամասն և բազմապլան գեղարվեստական տեսք,

գ) աբստրակտ էքսպրեսիոնիզմը նպատակ ունի ստեղծել արվեստ առանց նկարչի հույզերի, մինչդեռ մինիմալիզմը կենտրոնանում է ռեալիստական նկարչության վրա,

դ) աբստրակտ էքսպրեսիոնիզմն արտահայտում է նկարչի զգացմունքները, մինչդեռ մինիմալիզմը նպատակ ունի տպավորել պատկերվող առարկայի էությունը:

(1) **12. Խեցեգործական ժամանակակից նմուշներից ո՞րն է ստեղծված Եգեյան մշակույթի ներշնչմամբ:**

ա)

բ)

գ)

դ)

(1) **13. Թվարկածներից ո՞րը *չի արտահայտում* ներկայացված նմուշի գործառույթը/նշանակությունը:**

ա) Տարօրինակ դեկորատիվ տարր՝ անձրևաջրերի փողրակի գործառույթով,

ճ) գոթական տաճարի ճակատային մասի դեկորատիվ ձևավորման համակարգի տարր,

գ) քրիստոնեական տաճարի պահապան չար և պիղծ ոգիներից,

ք) այլաբանական պատկեր, քրիստոնեական ուսմունքի երկրային հենարան:

(1) **14. Թվարկածներից ո՞ր առանձնահատկությունն է բնորոշ հելլենիստական և բարոկկոյի արվեստին:**

ա) Ձևերի իդեալականացում, հավասարակշռություն և կոմպոզիցիայի դինամիկ բնույթ,

բ) ձևերի մանրամասնում, դինամիզմ և գեղարվեստական պատկերի դրամատիզմ,

գ) ձևերի ընդհանրացում, հավասար լուսավորություն և սիմետրիկ կոմպոզիցիա,

դ) ձևերի արտահայտչականություն և գեղարվեստական պատկերի վերացական բնույթ:



(1) **15. «Ապոլլոնը Վեյից» էտրուսկյան քանդակը դրսևորում է հին հունական կուրոսների հետ սերտ կապը: Ո՞րն է դրանց տարբերակիչ նշանը:**

ա) Հունական քանդակի չափերը մոտ են իրական մարդու չափերին,

բ) էտրուսկյան քանդակի էներգետիկ շարժմամբ տարածումը տարածության մեջ,

գ) հունական քանդակի առավել լավ մոդելավորված մարմինը,

դ) էտրուսկյան քանդակի արխայիկ ժպիտը:

(1) **16. Ամենից շատ ո՞ր առանձնահատկությամբ են տարբերվում կոլխական ոսկերչական զարդերը իբերականից:**

ա) Իբերական զարդերին հատկապես բնորոշ են պոլիխրոմիան (բազմագունություն)՝ մակերևույթը զարդարելու համար գունավոր քարերի օգտագործումը,
ճ) կոլխական զարդերին բնորոշ է գրանուլյացիան և ֆիլիգրանի տեխնիկայի առատ օգտագործումը,
գ) կոլխական զարդերը, պատկերման առումով, մեծ մասամբ ստեղծված են հին արևելյան մշակույթի ազդեցությամբ,
դ) իբերական զարդեր պատրաստողները հմտորեն օգտագործում էին սնամեջ իրեր պատրաստելու տեխնոլոգիան:

(1) **17. Ներկայացված կոմպոզիցիայում հիմնական գեղարվեստական հնարքներից ո՞րն է *գերակշռող*:**

ա) Պատկերների կրկնությամբ ստեղծված դինամիզմը,

բ) գծի միջոցով ստեղծված ասիմետրիկ հավասարակշռությունը,

գ) գույնի բաշխմամբ ստեղծված խառը ռիթմը,

դ) տոնային անցումներով հիմնականի շեշտադրումը:

(1) **18. Ի՞նչ նպատակի է ծառայում Կարավաջոյի «Սուրբ Պետրոսի խաչելությունը» կտավում օգտագործված վառ լուսավորությունը:**



ա) Լուսավորության էֆեկտի ստեղծմանը՝ հուզական հնչեղությունն ուժեղացնելու նպատակով,

բ) մեծ ձևաչափի վրա փոքր տարրերի կազմակերպմանը՝ կոմպոզիցիոն հավասարակշռության նպատակով,

գ) գունային գրադացիայի ստեղծմանը՝ ծավալի պատրանքը առավելագույնս դրսևորելու նպատակով,

դ) ձևերի կրկնության շեշտադրմանը՝ ռիթմիկ հերթագայություն ստեղծելու նպատակով:

(1) **19. Ո՞ր ձևակերպումն է *համապատասխանում* ներկայացված ճարտարապետական կառույցի ոճին և առանձնահատկությանը:**

Ֆրիդենսրայխ Հունդերտվասեր. Աղբի վերամշակման գործարան. Վիեննա

ա) Էկոճարտարապետության հետաքրքիր նմուշ է, որի դեկորատիվ ձևավորումը չի համապատասխանում իր գործառույթին,

բ) դեկոնստրուկտիվիզմի նմուշ է, որը ասիմետրիայով և գունագեղ լուծումներով ասոցացվում է Բաուհաուզի ճարտարապետության հետ,

գ) բիոմորֆիզմի նմուշ է, օգտագործված են օրգանական և գնդաձև ճարտարապետական ձևեր, ինչում դրսևորվում է մոդեռնի արվեստի ազդեցությունը,

դ) էկո և կենսաճարտարապետության սինթեզը ճարտարապետին ստեղծագործական ազատություն է հաղորդել, որը դարձել է նորարարական ոճի հիմքը:

**№ 20-25 առաջադրանք:** ***«Ճիշտ է - Սխալ է»***

**Առաջադրանքի հրահանգ.** Ուշադիր ծանոթացե՛ք տրված դրույթներին, եթե համարում եք, որ դրույթը ճիշտ է, ապա նշե՛ք համապատասխան վանդակը: Նման դեպքում մեկնաբանություն չի պահանջվում: Եթե համարում եք, որ դրույթը սխալ է, ապա նշե՛ք համապատասխան վանդակը և հատուկ հատկացված տեղում գրե՛ք ճիշտ ձևակերպումը:

**Ցուցում.** Սխալ դրույթի դեպքում, տրված բացատրությանը կարող եք համապատասխանեցրել ճիշտ տերմին/բառ կամ տրված տերմինի/բառի համար գրեք ճիշտ բացատրություն: Հաշվի առեք, որ պատասխանը չի ընդունվի, եթե տրված բացատրության դրական ձևը փոխեք բացասականով կամ ընդհակառակը:

**Նմուշ.**



(1) 20. Արխաիկ դարաշրջանի քանդակների ստատիկ, լարված կեցվածքների փոխարինումը թեթև կոնտրապոստով հունական դասական շրջանին անցնելու արտահայտիչ կարևոր նշաններից մեկն է:

(1) 21. Իտալական Վերածննդի դարաշրջանի նկարիչների մեծամասնությանը չէր մտահոգում նկարում մարդու համամասնությունները մանրակրկիտ ճշգրտությամբ պատկերելու հարցը:

(1) **22. Սթոունհենջը նեոլիթյան դարաշրջանի մեգալիթ է:**

(1) **23. Կերպարվեստի միջոցներն են՝ ստատիկան, դինամիկան, համամասնությունը, մասշտաբը, հեռանկարը:**

(1) **24.** Նկարում ներկայացված գեղանկարը ոճով և կատարման յուրաձևությամբ պատկանում է պոստիմպրեսիոնիստ Վինսենթ վան Գոգին:



(1) **25**. Նկարում ներկայացված է Հին Եգիպտոսի արվեստի նմուշ, որը հայտնի է «Մեմնոնի կոլոսներ» անվամբ:



(7) **Առաջադրանք № 26.** ***Գործնական աշխատանք***

**Հրահանգ.**

Օգտագործելով լուսանկարներում ներկայացված առարկաները՝ ծաղկամանը և բույսի ճյուղը (կարող եք ընտրել բույսերի նմուշներից մեկը կամ երկուսն էլ, ձեզանից չի պահանջվում նկարել բոլոր առարկաները), ստեղծեք մեկ նատյուրմորտ: Կոմպոզիցիան ստեղծելու հարցում ձեզ տրվում է ազատություն: Տեղադրեք պատկերը նկարի հարթության վրա՝ հաշվի առնելով կոմպոզիցիոն բաշխման սկզբունքը: Պահպանեք առարկաների համապատասխան համամասնությունները, հաղորդելով դրանց ֆակտուրա, ծավալ և տարբերակեք պատկերները տոնայնորեն: Ընկած ստվերը պատկերելիս որոշեք լուսավորության ուղղությունը: Լրացրեք առաջադրանքը գործնական աշխատանքի համար նախատեսված թերթիկի վրա:



(1) **Առաջադրանքներ № 27-29.** ***Ժամանակագրության որոշում:***

**Առաջադրանքի հրահանգ.** Դասավորեք (հնագույնից մինչև նորագույն) գեղարվեստական հոսանքները, նկարիչների գործերը, ճարտարապետության և կերպարվեստի նմուշներն՝ ըստ դրանց ստեղծման ժամանակի: Պատասխանները գրառեք պատասխանների թերթիկի վրա տրված աղյուսակում: Հաշվի առեք, որ աղյուսակում գրվում է միայն ընտրած միավորի համապատասխան թվանշանը:

| (1) **27. Դասավորեք ներկայացված արվեստի նմուշները՝ ըստ դրանց ստեղծման ժամանակի:** | | | |
|---|---|---|---|
| 1. | 2. | 3. | 4. |
|  |  | | |

| (1) **28. Դասավորեք վրացական քանդակագործության նմուշները՝ ըստ դրանց ստեղծման ժամանակի:** | | | |
|---|---|---|---|
| 1. | 2. | 3. | 4. |
|  |  |  | |

| (1) **29. Դասավորեք Վրաստանի թանգարանային ճարտարապետությունը՝ ըստ դրանց ստեղծման ժամանակի:** | | | |
|---|---|---|---|
| 1. | 2. | 3. | 4. |
| | | | |

(3) **Առաջադրանք № 30.** ***Համապատասխանության որոշում.*** Բ սյունակում ներկայացված բազկաթոռների նմուշները ոճային առումով համապատասխանեցրեք Ա սյունակում նեկայացված ճարտարապետական նմուշներին: Հաշվի առեք՝ մեկ շինությանը համապատասխանում է միայն մեկ նմուշ:

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **A** | 1. | | 2. | | 3. |
| **B** | ա. | բ. | գ. | դ. | ե. |

(3) **Առաջադրանք № 31.** *Համապատասխանության որոշում.* Բ սյունակում ներկայացված ճարտարապետական տարրերը և շինությունների տեսակները համապատասխանեցրեք Ա սյունակում նշված դրանց անվանումներին: Հաշվի առեք՝ մեկ անվանմանը համապատսխանում է միայն մեկ նկար:

| |
|---|
| **Ա.** 1. Կեղծ դամբարանախուց 2. Մաստաբա 3. Փարավոնի դամբարանախուց |
| **Բ.**   |

## Գրավոր առաջադրանքների հրահանգ

Ուշադիր ծանոթացե՛ք առաջադրանքներին և ըմբռնե՛ք դրանք:
Աշխատանքը կատարեք դյուրընթեռնելի ձեռագրով: Այն հատվածները, որոնք դժվար ընթեռնելի են, չեն ստուգվի և գնահատելիս չեն նկատառվի:
Գրավոր չորս աշխատանքներին կից ներկայացված են ցուցումներ: Այդ ցուցումներին պետք է պատասխանեք այնպես, որ աշխատանքն իմաստային տեսանկյունից լինի ամբողջական: Զերծ մնացեք հարցերին տրված մեխանիկական պատասխաններից:
Ձեր կարծիքը ձևակերպեք պարզ, հստակ և հիմնավորված: Աշխատանքը կգնահատվի, նրանում դրսևորված փաստարկման (սեփական կարծիքն օրինակներով հիմնավորելու) և ինքնուրույն մտածելու ունակության համաձայն:
Դատողությունը պետք է լինի տրամաբանական, միտքը հասկանալի արտահայտված:
Տեղափոխեք աշխատանքը պատասխանների թերթիկի վրա:
Պատասխանների թերթիկում թույլ տրված սխալի վրա ուղղակի գիծ քաշեք, չի թույլատրվում առնել այն փակագծերի մեջ կամ խազմզել:

(4) Առաջադրանք № 32. Արվեստի որոշ գործեր մտածված են որպես դիցաբանական սյուժեի մեկնաբանություն: Արվեստի ներկայացված գործերից ընտրեք մեկը և կապեք այն կոնկրետ սյուժեի հետ: Վերլուծե՛ք աշխատանքը և որոշե՛ք.

1. Պոմպեի որմնանկար

2. Ռեմբրանդ

**3.** Նանա Գերասիմովա



**4.** Անրի Մատիս

**ա.** Տեսողական և կոնտեքստուալ առանձնահատկությունները, որոնք բացահայտում են այս ստեղծագործության կապը ձեր անվանած սյուժեի հետ:

**Ծ.** Ո՞ր գեղարվեստական հնարքների միջոցով է արտահայտում հեղինակը ստեղծագործության գաղափարը:

(15) **Առաջադրանք № 33. Արվեստի նմուշի նկարագիր-վերլուծություն:**
Ընտրե՛ք, վերլուծե՛ք և գնահատե՛ք ստորև ներկայացված արվեստի նմուշը:

**Կատարե՛ք առաջադրանքն, ըստ ցուցումների.**

(3) **33.1** Նկարագրե՛ք և բնութագրե՛ք կոմպոզիցիան: Ո՞ր ժանրին է պատկանում այս կոմպոզիցիան: Հիմնվելով նյութի և տեխնիկայի վրա՝ որոշե՛ք, թե կերպարվեստի որ ճյուղի նմուշն է ներկայացված:

(3) **33.2** Վերլուծե՛ք և համառոտ ձևակերպե՛ք, թե ինչ արտահայտչամիջոցներ ու հնարքներ է կիրառում հեղինակը նկարում գեղարվեստական պատկերի բնույթը ստեղծելու համար:

(3) **33.3** Գեղարվեստաոճական բնութագրիչների հիման վրա որոշե՛ք հոսանքը, որոշե՛ք, թե որ երկրի և դարաշրջանի  արվեստի նմուշ է ներկայացված, նշե՛ք հեղինակի անունը:

(3) **33.4** Գնահատե՛ք աշխատանքը՝ արտահայտե՛ք Ձեր վերաբերմունքը, մտորե՛ք և հիմնավորե՛ք Ձեր կարծիքը:

(3) **33.5** Դատողություններ արե՛ք ազդեցությունների շուրջ: Դիտարկեք ստեղծագործությունը պատմամշակութային և այլ համատեքստում: